

<p style="text-align: center;">ՓՈԽՆՄԲՈՒՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ</p> <p style="text-align: center;">ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ</p> <p style="text-align: center;">ԵՎ «ԹԱՍՔ ՖՈՐՍ ՖՈՐ ԳԼՈԲԱԼ ՀԵԼԹ» ՇԱՀՈՒՅԹ</p> <p style="text-align: center;">ՉՀԵՏԱՊՆԴՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ</p> <p style="text-align: center;">«ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՄԱՀԱՎԱՍԱՐ</p> <p style="text-align: center;">ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»-Ի ՄԻՋԵՎ</p>	<p style="text-align: center;">MEMORANDUM OF UNDERSTANDING</p> <p style="text-align: center;">Between</p> <p style="text-align: center;">The GOVERNMENT of ARMENIA</p> <p style="text-align: center;">and</p> <p style="text-align: center;">The CENTER FOR VACCINE EQUITY</p> <p style="text-align: center;">Of</p> <p style="text-align: center;">THE TASK FORCE FOR GLOBAL HEALTH, INC.</p>
<p>«Պատվաստանյութերի համահավասար հասանելիություն» կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն), «Թասք Ֆորս Ֆոր գլոբալ հելթ» (ԹՖԳՀ) ԱՄՆ-ի Ջորջիա նահանգի օրենքներին համապատասխան շահույթ չհետապնդող կազմակերպության ծրագիր է, որը ուրախ է առաջարկել 2014թ. Փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր)՝ ԹՖԳՀ-ի և ՀՀ կառավարության՝ ի դեմս ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ ԱՆ) միջև՝ աջակցելու գրիպի բարդությունների կանխարգելմանը:</p> <p>Այս Հուշագիրը բացառապես աջակցում է գրիպի կանխարգելման նպատակով սեզոնային գրիպի պատվաստանյութի բաշխմանը և բխում է Կանաչ Խաչի</p>	<p>The Center for Vaccine Equity ("CVE"), a program of The Task Force for Global Health, Inc. ("TFGH"), a non-profit corporation under the laws of the State of Georgia, USA, is pleased to offer this 2014 Memorandum of Understanding ("MOU") to be entered into between TFGH and the Ministry of Health of Armenia ("MOH") on behalf of the Government of Armenia in support of the prevention of complication of influenza.</p> <p>This MOU is exclusively to support the distribution of seasonal influenza vaccine for prevention of influenza and is subject to and conditioned upon a certain agreement between Green Cross and TFGH (the "Green Cross Agreement"), wherein Green Cross has agreed to</p>

<p>ԹՖԳՀ -ի միջև հաստատված համաձայնագրից («Կանաչ Խաչի Համաձայնագիր»), ինչն է նկատի ունենալով, որ Կանաչ Խաչը համաձայնվել է տրամադրել սույն Հուշագրից բխող գրիպի պատվաստանյութի ամբողջ քանակը «Լուծումներ Գլոբալ Առողջության համար» կազմակերպությանը, որը շահույթ չհետապնդող աշխատանքային խմբին աջակցող ընկերություն է: Սույն Հուշագրում կիրառվում են հետևյալ դրույթները և պայմանները`</p>	<p>provide all of the influenza vaccine that is the subject of this MOU to Global Health Solutions, Inc. (GHS), a non-profit supporting organization to the Task Force. The following terms and conditions apply:</p>
<p><u>1.Հուշագրի ժամկետը.</u> Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում -----ամիս/օր, 2014թ. մինչև -----ամիս/օր/տարի, բայց կարող է դադարեցվել ցանկացած ժամանակ, ցանկացած կողմից 30 օր առաջ ֆաքսով կամ էլ. փոստով ծանուցելով լիազորված ներկայացուցչին, ում անունը ներկայացված է Հուշագրի վերջում: Եթե Կանաչ Խաչի համաձայնագիրը դադարեցվում է որևէ պահին, ապա Կենտրոնն իրավունք է ստանում դադարեցնել այս հուշագիրը՝ գրավոր ծանուցմամբ տեղեկացնելով ՀՀ ԱՆ-ին, և այս դադարեցումը ուժի մեջ է մտնում անմիջապես, երբ ՀՀ ԱՆ գրավոր ծանուցում է ստանում Կենտրոնից: Հուշագիրը կարող է վերանայվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ ստորագրվելով երկու կողմերի լիազորված ներկայացուցիչների կողմից:</p>	<p>1. <u>Term of MOU:</u> This MOU is effective from MONTH DAY, 2014 through MONTH DAY, YEAR, but may be terminated at any time by either party with prior written notice of at least 30 days delivered by overnight mail, fax or email to the Authorized Representatives whose names appear at the end of this MOU. If at any time the Green Cross Agreement is terminated, CVE reserves the right to terminate this MOU by giving written notice as above to MOH, and such termination shall be effective immediately upon receipt by MOH of such written termination notice from CVE. The MOU may be renewed only upon mutual agreement in writing signed by the Authorized Representatives of both parties.</p>
<p><u>2.Կենտրոնի պարտավորությունները</u> Կենտրոնը համաձայնվում է մատակարարել ՀՀ ԱՆ-ին Հարավային կիսագնդի սեզոնային գրիպի 60,000 դեղաչափ պատվաստանյութը, որը նվիրաբերվել է Կենտրոնին Կանաչ Խաչի կամ մեկ այլ կազմակերպության կողմից հատուկ</p>	<p>2. Obligations of CVE: CVE agrees to provide MOH with 60,000 doses of Southern Hemisphere seasonal influenza vaccine, donated by Green Cross or another entity to CVE for the exclusive purpose of influenza prevention. These vaccines are valued at approximately \$XXXUSD and will ensure prophylaxis for up to 60,000 people in 2014. Final</p>

<p>նպատակով գրիպի կանխարգելման համար: Այս պատվաստանյութերը գնահատվում են մոտավորապես XXX ԱՄՆ դոլար և կապահովեն մինչև 60,000 մարդու կանխարգելումը 2014 թ.-ին: Առաքվող պատվաստանյութի վերջնական քանակը կարող է կրճատվել Կենտրոնի կողմից՝ փոփոխված հանգամանքների հիման վրա:</p>	<p>quantities of vaccine shipped may be reduced by CVE based on altered circumstances.</p>
<p><u>3. Գործընկերոջ պարտավորությունները</u> ՀՀ ԱՆ համաձայնվում է գործել հետևյալ պահանջների համահունչ.</p>	<p><u>3. Obligations of Partner:</u> MOH agrees to abide by the following requirements:</p>
<p>ա) Ապահովել, որ գրիպի պատվաստանյութը չօգտագործվի հետազոտական նպատակներով, առանց «Պատվաստանյութերի համահավասար հասանելիություն» կենտրոնի նախնական, ամբողջական գրավոր հաստատման:</p>	<p>a. Ensure that influenza vaccine is not used for research purposes without the prior, full written approval of CVE.</p>
<p>բ) Ապահովել գրիպի դեմ պատվաստանյութի ներմուծումը Հայաստան՝ առանց մաքսային վճարների, հարկերի, տուրքերի, այլ ծախսերի: Ցանկացած առնչվող վճարում, այդ թվում՝ անկանխիկ վճարներ, հարկեր, փաստաթղթային և սովորական վճարներ, ՀՀ ԱՆ պատասխանատվության ներքո են:</p>	<p>b. Ensure duty-free entry of influenza vaccine into Armenia without imposing customs duty or tax or other costs. Any associated fees , including, but not limited to, clearing agent fees, taxes, documentation fees, and demurrage fees are the responsibility of the MOH.</p>
<p>գ) Ապահովել անհրաժեշտ ֆինանսական և մարդկային ռեսուրսների առկայություն՝ նվիրաբերված գրիպի պատվաստանյութի բաշխմանն աջակցելու համար:</p>	<p>c. Ensure the necessary financial and human resources to support the distribution of the donated influenza vaccine.</p>
<p>դ) Այն շրջաններում, որտեղ բաշխվելու է պատվաստանյութը,</p>	<p>d. Implement the full training strategy in the districts in which the</p>

<p>իրականացնել ամբողջական ուսուցում:</p>	<p>vaccine distributions occur.</p>
<p>ե) Ապահովել պատվաստանյութի անվտանգության մոնիթորինգի և պատվաստումների հաշվետվության գործընթացի իրականացումը: Եթե ՀՀ ԱՆ և/կամ իրականացնող կողմերը տեղեկանում են հնարավոր հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի (ՀԱԴ), ռիսկային իրավիճակների կամ որակի վերաբերյալ բողոքների մասին, որոնք կարող են կապված լինել գրիպի պատվաստանյութի հետ, տեղեկացնում են Կանաչ Խաչին, Կանաչ Խաչի կողմից նշանակված գրասենյակի միջոցով, որը թվարկված է կոնտակտների ցուցակում Աղյուսակ 1-ում, սվյալ Հուշագրի Հավելված Ա-ում ընդգրկված ՀԱԴ-ի, ՌԻ-ի և ՊՈԲ-ի հաշվետվությունների ընթացակարգի համաձայն:</p>	<p>e. Ensure that product safety monitoring and reporting processes are in place. If the MOH and/or Implementing Partners become aware of potential Adverse Events ("AE(s)"), At Risk Scenarios ("ARS(s)"), and Product Quality Complaints ("PQC(s)") that may be associated with the influenza vaccine, they will inform Green Cross through the designated Green Cross office listed in the contact list in Table 1 in accordance with the procedures for AE, ARS and PQC reporting included in Annex A of this MOU.</p>
<p>զ) Ապահովել, որ կողմերի փոխադարձ համաձայնության հիման վրա պատվաստանյութն օգտագործվում է միայն գրիպի կանխարգելման համար, չի փոխանցվում կամ փոխանակվում դրամի, գույքի կամ ծառայությունների դիմաց: Կողմերի նպատակն ու համաձայնությունը գրիպի պատվաստանյութը ոչ առևտրային ձևով բաշխումն է:</p>	<p>f. Ensure that vaccine is used only for the prevention of influenza as mutually agreed between MOH and CVE, and is not transferred or sold in exchange for money, property or services. It is the intent and agreement of the parties that all donated influenza vaccine will be distributed in a non-commercial fashion.</p>
<p>է) Համագործակցել Կենտրոնի, Կանաչ Խաչի և իրենց համապատասխան առընթեր կազմակերպությունների ու ներկայացուցիչների հետ այս հուշագրի նպատակները պատշաճ մակարդակով իրականացնելու համար: ՀՀ ԱՆ մշակում է կանխատեսումներ՝ Կենտրոնի հետ համատեղ, որը որպես ուղեցույց կօգտագործվի պատվաստանյութի</p>	<p>g. Cooperate with CVE, Green Cross, and their respective affiliated entities and representatives as reasonably required to accomplish the objectives of this MOU. MOH will work with CVE to develop forecasts that will be used to guide the use, shipment, and distribution of vaccine, and will cooperate with third party consultants as identified by CVE on efforts to audit and improve the supply chain for the</p>

կիրառման, առաքման և բաշխման համար և կհամագործակցի Կենտրոնի կողմից նշանակված երրորդ կողմի խորհրդատուների հետ՝ պատվաստանյութի առաքման և բաշխման գործընթացները վերահսկելու և բարելավելու համար:	shipment and distribution of vaccine.
ը) Ապահովել, որ Կանաչ Խաչի նվիրաբերած պատվաստանյութը չի կիրառվի այլ աղբյուրներից գնված կամ նվիրաբերված գրիպի պատվաստանյութերի հետ համատեղ:	h. Ensure that administrations of vaccine donated by Green Cross are not conducted concurrently to a patient with administrations of other influenza vaccines purchased or donated by a different source.
4. Հաշվետվության պահանջները ՀՀ ԱՆ համաձայնվում է Կենտրոնին ներկայացնել հաշվետվություն նախատեսված ձևաչափով, ներառելով՝	4. Reporting Requirements: MOH agrees to submit to CVE reports of progress in the format provided by CVE, including:
ա) Պատվաստված անձանց թիվը՝ ըստ ռիսկային խմբերի	a. The number of persons vaccinated by risk category.
բ) Գրիպի մոնիթորինգի արդյունքները	b. Results of influenza surveillance monitoring.
գ) Պատվաստանյութի մնացորդային պաշարը, քանակը, պիտանելիության ժամկետը, պատվաստանյութի մնացորդային պաշարի գտնվելու ճշգրիտ վայրը:	c. The vaccine stock-on-hand, quantities, expiration date and the precise location of the vaccine stock.
ՀՀ ԱՆ-ն ընդունում և համաձայնում է, որ Կենտրոնը կարող է այդ հաշվետվությունները և/կամ այդ հաշվետվություններից բխող տեղեկությունները տրամադրել Կանաչ Խաչին կամ այլ կազմակերպություններին Կենտրոնի հայեցողությամբ:	MOH acknowledges and agrees that CVE may provide these reports and/or information derived from these reports to Green Cross and to other organizations at CVE's reasonable discretion.
Հաշվետվությունները ներկայացվում են Կենտրոնին հետևյալ ժամկետներում՝	Report is to be submitted to CVE as follows:

<p>XXX օրվանից մինչև 2015թ. հունվարի 23-ը</p>	<p>Վերջնական հաշվետվություն՝ Մայիսի 1, 2015թ.</p>	<p>From XXX to January 23, 2015</p>	<p>Final report due May 1, 2015</p>
<p>Պատասխանատվության և հաշվետվությունների ներկայացման պահանջները չկատարելը կարող է հանգեցնել պատվաստանյութի մատակարարման հետաձգման, պատվաստանյութի քանակի պակասեցման, և/կամ հետագա նվիրաբերումներ ստանալու իրավունքի զրկման:</p>		<p>Non-compliance to the terms of obligation and reporting requirements can result in a delayed shipment, reduced vaccine quantities, and/or exclusion from future donations.</p>	
<p><u>5.Ֆինանսավորման պահանջները և նվիրաբերված ապրանքի ընդունումը.</u> Նվիրաբերված պատվաստանյութը պետք է օգտագործվի բացառապես Կենտրոնի և ՀՀ ԱՆ-ի կողմից համաձայնեցված նպատակների համար: Նվիրատվություն տրված պատվաստանյութը չի կարող օգտագործվել ուղղակի կամ անուղղակի բռնությանը կամ ահաբեկչությանն օժանդակելու կամ դրանց աջակցող կազմակերպություններին տրամադրելու համար:</p>		<p><u>5. Requirements of Funding and Reception of Donated Products:</u> Vaccine donations are to be used solely for activities as agreed upon by CVE and MOH. No portion of the donated vaccine may be used for the support, direct or indirect, of any acts of violence or terrorism or for any organization engaged in or supporting such acts.</p>	
<p><u>6.Կառավարող օրենքը</u> Հուշագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:</p>		<p><u>6. Governing Law:</u> This MOU shall be governed by the laws of the Armenia.</p>	
<p><u>7.Դադարեցմանը հետևող պարտականությունները</u> Վաղաժամկետ դադարեցման դեպքերում ՀՀ ԱՆ շարունակում է ապահովել պարտականությունների կատարումը նախքան դադարեցումը նվիրաբերված պատվաստանյութերի օգտագործում, հաշվետվությունների ներկայացում ըստ նշված 3-րդ և 4-րդ կետերի, և, եթե</p>		<p><u>7. Obligations following Termination:</u> In the event of early termination, MOH shall (a) continue to honor the obligations concerning the use of donated vaccine received by MOH prior to termination and the submission of reports set forth in paragraphs 3 and 4 above, and (b) if requested by CVE, return any quantities of donated vaccine that have not yet been distributed.</p>	

<p>Կենտրոնի կողմից պահանջ կա, վերադարձնել նվիրաբերած պատվաստանյութի ցանկացած քանակ, որը դեռևս բաշխված չէ:</p>	
<p>8. Անհաղթահարելի ուժ(Ֆորս մաժորային իրավիճակ)</p>	<p>8. Force Majeure</p>
<p>ա) Անհաղթահարելի ուժը նշանակում է երկրաշարժ, թայֆուն, համաճարակ, աշխատանքի պայմանների վատթարացում, ջրհեղեղ, հրդեհ, պատերազմ և այլ անկանխատեսելի, անխուսափելի աղետներ և որևէ կողմից կախում չունեցող իրավիճակ, որոնք առաջացել են սույն համաձայնագրի ստորագրումից հետո, որոնք խոչընդոտում են առդիր ներկայացված պարտականությունների կատարումը:</p>	<p>a. Force majeure shall mean earth quake, typhoon, pandemic, labor disturbance, flood, fire, war and any other unforeseen, unavoidable and beyond control of either party arising after the signing of this agreement, which prevents total of the undersigned obligation.</p>
<p>բ) Կողմերը պատասխանատվություն չեն կրում Ֆորս մաժորային իրավիճակով պայմանավորված չկատարված պարտականությունների համար, եթե կողմը՝ հաստատելով Ֆորս մաժորային իրավիճակը, մյուս կողմին է ներկայացնում ողջամիտ և արագ ծանուցում:</p>	<p>b. A party shall not be liable for non-performed obligations, if prevented by force majeure, so long as the party asserting force majeure provides the other party a prompt notice as reasonably as possible.</p>
<p>9.Վեճերը կարգավորող մեխանիզմ</p>	<p>9. Dispute Settlement Mechanism</p>
<p>Եթե կողմերից որևէ մեկը չի կատարում իր պարտականությունները ժամանակին, ապա կողմերը, նրանց տրամադրելով 30 օր գրավոր ծանուցման համար, պետք է լուծեն անախորժությունը խաղաղ ճանապարհով բանակցությունների միջոցով: Եթե կողմերը չեն կարողանում լուծել իրենց վեճը</p>	<p>If either of the parties fails to discharge its obligation in due time, then the parties, by giving 30 days of written notice, shall resolve the grievance amicably by negotiation. If the parties fail to settle their dispute by meditation, then they shall go to court with a relevant jurisdiction.</p>

<p>բանակցությունների միջոցով, ապա այն ենթակա է լուծման համապատասխան իրավասության դատարանի կողմից:</p>	
<p>10. Պատասխանատվություն</p>	<p>10. Liability:</p>
<p>ՀՀ ԱՆ-ն պետք է ստանձնի բոլոր պարտականությունները և պատասխանատվությունը, որոնք ծագում են կամ կապված են սույն Հուշագրի շրջանակներում նվիրաբերված Հարավային Կիսագնդի սեզոնային գրիպի դեմ պատվաստանյութի երկիր ներմուծման, բաշխման և օգտագործման հետ: Առողջապահության նախարարությունը պարտավոր է հատուցել, պաշտպանել և անվնաս պահել ԹՖԳՀ, GHS, Կանաչ Խաչը և նրանց համապատասխան տնօրեններին, ղեկավարներին, աշխատակիցներին, գործակալներին, ներկայացուցիչներին և անձանց բոլոր այն «մեղադրանքներից», որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով առաջանում են Հայաստանում դրանց մատակարարման, տարածման, վերափաթեթավորման կամ կիրառման արդյունքում: Այս մասով «մեղադրանք», նշանակում է որևէ պահանջ և պարտավորություն երրորդ կողմի նկատմամբ և վերջինիս հետ կապված ծախսեր (նաև դատարան, վարչական գործակալության, դատաքննիչ կամ այլ տրիբունալ), այդ թվում, առանց սահմանափակման, վնասներ (թե ուղղակի, հետևանքային, պատահական կամ պատժիչ) վճիռներ, մրցանակներ, տուգանքներ, տույժեր, բնակավայրեր, ուսումնասիրություններ, ծախսեր, իրավաբանական վճարներ և բաշխումներ, մտավոր իրավունքների խախտումներ Հայաստանում: Առողջապահության նախարարությունը ընդունում և</p>	<p>MOH shall assume all responsibility and liability arising out of or related to the importation, distribution and use of donated Southern Hemisphere seasonal influenza vaccine (GC FLU inj) received by MOH pursuant to this MOU. MOH shall indemnify, defend and hold harmless the TFGH, GHS, Green Cross and their respective directors, officers, employees, agents, representatives and affiliates (the Indemnified Parties) from all such Claims as hereinafter defined, which arise directly or indirectly from or in respect of the supply, distribution, repacking or use or effects of the Products in Armenia. For purposes of this section, "Claims" shall mean any claims and liabilities to third parties and expenses incurred in connection therewith (whether or not in connection with proceedings before a court, arbitration panel, administrative agency, hearing examiner or other tribunal), including, without limitation, damages (whether direct, consequential, incidental, or punitive), judgments, awards, fines, penalties, settlements, investigations, costs, and attorneys' fees and disbursements, and intellectual property infringements in Armenia. MOH further acknowledges and agrees that the Indemnified Parties shall have no liability should Green Cross not supply the amounts of Southern Hemisphere seasonal influenza vaccine (GC FLU inj) contemplated by this MOU.</p>

<p>համաձայնում է, որ կողմերը ոչ մի պատասխանատվություն չեն կրում, եթե Կանաչ Խաչը չի տրամադրում սույն Հուշագրով նախատեսված Հվ.Կիսագնդի սեզոնային գրիպի դեմ պատվաստանյութը:</p>			
<p>11. Հուշագրի լեզուն</p> <p>Հուշագիրը կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Թարգմանության անհավաստասխանությունների դեպքում նախապատվությունը կտրվի Հուշագրի անգլերեն տարբերակին:</p>		<p>11. Language</p> <p>Done in 2 (two) original copies in both Armenian and English languages, all texts being equally authentic. In case of divergence in the interpretation, the English text shall prevail.</p>	
<p>«ԹԱՍՔ ՖՈՐՍ ՖՈՐ ԳԼՈՒԲԱԼ ՀԵԼԹ» ՇԱՀՈՒՅԹ ՉՀԵՏԱՊՆԴՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ</p>	<p>ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</p>	<p>THE TASK FORCE FOR GLOBAL HEALTH, INC. (TFGH)</p>	<p>MINISTRY OF HEALTH, ARMENIA</p>
_____	_____	_____	_____
Թոմաս Ֆ.Ռոսենբերգեր	Արմեն Մուրադյան	Thomas F. Rosenberger	Armen Muradyan
Գործադիր փոխնախագահ	ՀՀ առողջապահության	Executive Vice President	Minister of Health Republic of Armenia

	նախարար		
_____	_____	_____	_____
Ամսաթիվ	Ամսաթիվ	Date	Date

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՒԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ